

**Լ.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**  
**ՀԱՆԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՈՐՊԵՍ ԲԱՐԴ ԿԱՌՈՒՅՑԻ ԿԱԽՅԱԼ**  
**ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ**

Հայ շարահյուսագիտության ուսմունքում առկա են խնդրային ստորադասական կառույցներում երկրորդական նախադասության բնույթի որոշման տարբեր մոտեցումներ, որոնց բազմազանությունը խանգարում է այդ կառույցների գիտական դասակարգման հստակեցմանը: Հանգման խնդրի օրինակով առաջարկվում է առաջնահերթությունը տալ խնդրի պահանջած հոլովակարգին:

**Առանցքային բառեր.** բարդ ստորադասական նախադասություն, խնդրային ստորադասություն, հանգման անուղղակի խնդիր, տրական հոլով:

Բարդ ստորադասական նախադասության երկրորդականի բնույթի տարբերակումը ուսումնական գործընթացում եղել և մնում է վիճահարույց թեմա, քանի որ հայ շարահյուսագիտության մեջ չկա վերջնական և հստակ կողմնորոշում: Անշուշտ, խոսքը չի վերաբերում ուղիղ և ներգործող անուղղակի խնդիրներին, որոնցից առաջինը գործողության կատարման անմիջական կրող օբյեկտն է, համապատասխանում է հայցական հոլովով ձևական խնդիրն և ունենում միայն ներգործական սեռի բայ-լրացյալ, իսկ երկրորդը գերադասի գործողության տրամաբանական ենթական է, պահանջում է անպայման կրավորական սեռի խնդրառու և համապատասխանում է բացառական հոլովի քերականական կարգին: Մինչդեռ մնացած խնդիրների համար ոչ միայն խնդրառու բայի սեռը առաջնահերթ չէ (լրացյալ կարող են դառնալ բայի բոլոր սեռերը), այլև միշտ չէ, որ դրանք պահանջում են միակ հոլովակարգ:

Անուղղակի խնդիրները, լինեն դրանք պարզ նախադասության կազմում, թե բարդ ստորադասական կառույցի կախյալ նախադասություն, իրենց ձևախմբատային հատկանիշներով արտահայտում են գերադասի խնդրառու բայի գործողության հետ կապված կամ դրան առնչվող անուղղակի հարաբերություններ ու օբյեկտներ, որոնք դրսևորում են գործողության հետ առնչության նրբիմաստային մեծ բազմազանություն: Թերևս դրանով է պայմանավորված այս խնդիրների տեսակավորման հստակության բացակայությունը:

Եթե փորձենք համադրել հայ շարահյուսագետների մոտեցումները, ապա կունենանք անուղղակի խնդիրների 30-ից ավելի տեսակներ (ներգործող, հանգման, մատուցման, հարցման կամ խնդրանքի, փոխարկման, հարաբերման, անջատման, ելակետային, ստորոգելիական, միջոցի, պարունակության, հարուցման,

վերաբերության, ընդհանրացված, տեղի, անորոշ խնդրի (բացարձակ անորոշ), կապային, շաղկապական, ուղղվածության, մասնավորման (սահմանափակման), միասնության, ուղեկցման, շահի, ստացական, ներքին ձգտում, հոգեկան որոշ տրամադրություն, համոզմունք, հույս, հավատ (և այլն) արտահայտող բայ-ստորոգյալի հետ կապված և այլն): Ակներև է, որ դրանցից շատերը ձևափոխության հատկանիշներով հեշտությամբ կարող են միավորվել և կրճատել տեսականին: Օրինակ՝ մատուցման, ստացական, տեղի, շահի, ուղղվածության, խնդրանքի, փոխարկման, հարաբերման խնդիրները՝ հանգման խնդրի հետ, պարունակության, հարուցման խնդիրները՝ միջոցի խնդրի հետ, ելակետային խնդիրը, ներգործող խնդրի բացառական հոլովակարգային ձևը՝ անջատման խնդրի հետ, վերջինիս գործիականը՝ միջոցի խնդրի հետ և այլն:

Անուղղակի խնդիրների նման առատությունը խոսում է այն մասին, որ դրանց տեսակավորումը դեռևս չունի ավարտուն պատկեր: Պատճառը թերևս խնդրառու բայերի բառիմաստների չափից ավելի մանրակրկիտ դասոսումն է, որի հետևանքով խնդիրների քանակը մեծանում է, սակայն աղոտանում են տարբերակիչ սահմանները: Հայերենի շարահյուսագիտության զարգացման սկզբնական շրջանում խնդիրների՝ որպես շարահյուսական առանձին միավորների տարբերակման և դասակարգման գործընթացում հիմնարար դեր է խաղացել բայիմաստը: Մ. Աբեղյանը, ներկայացնելով խնդիրների 4 խմբեր (կրող, ներգործող, բնության, պարագայական), դասակարգման համար հիմք էր ընդունում «բայիմաստի հետ ունեցած հարաբերությունը» [1, 374]:

Շարահյուսագիտության արդի փուլում, երբ խնդիրն ու պարագան դիտվում են որպես առանձին միավորներ, անուղղակի խնդիրների դասակարգման ելակետ են դառնում հոլովները կամ դրանց շարահյուսական համանիշներն ստեղծող կապերը (կապական բառերը). ըստ այդմ՝ Մ. Ասատրյանը դրանք խմբավորում է հոլովային (տրական հոլովի խնդիր, բացառական հոլովի խնդիր ևն) և կապային տեսակներով [2, 232-246], Ռ. Իշխանյանը՝ այդ հոլովների իմաստային դաշտով [3, 202-225], Գ. Ջահուկյանը՝ «...առաջին հերթին հոլովներով ու կապերով և երկրորդաբար հարաբերական բառերով» [4, 422]:

Հաշվի առնելով անուղղակի խնդիրների ձևափոխության առավել ընդհանուր հատկանիշները, գերադասի խնդրառու բայի իմաստային պահանջը, ինչպես նաև առկա կամ ենթադրվելիք խնդրի հոլովը կամ կապական բառերով ընկալելի հոլովային կարգը՝ լեզվաբաններից շատերը (Ն. Պառնասյան, Ս. Աբրահամյան, Ա. Պապոյան, Լ. Եզեկյան և այլք) դրանց համակարգման շրջանակը զգալիորեն նեղացրել են՝ հիմք ընդունելով նախ քերականական ձևը (խնդրի հոլովակարգը, այդ կարգը լրացնող կապական բառերը և այլն), ապա նոր միայն բայերի բառիմաստային նրբերանգները:

Այս տեսանկյունից ելնելով՝ բարդ ստորադասական կառույցներում անուղղակի կախյալ նախադասության տարբերակման համար ևս պետք է առաջնահերթությունը տալ քերականական հատկանիշներին:

**Հանգման անուղղակի խնդիր կախյալ նախադասությունը**, ինչպես արդեն նշեցինք, կարող է ներառել վերը թվարկվածներից՝ մատուցման, ստացական, տեղի, շահի, ուղղվածության, խնդրանքի, փոխարկման, հարաբերման խնդիրների ձևաիմաստային հատկանիշները, քանի որ այն **ցույց է տալիս գերադաս նախադասության խնդրառու բայի կամ բայական անդամի գործողության ուղղվածության այն օբյեկտը, որին հանգում է այդ գործողությունը**: Իսկ հանգելու գործառույթն ունի իմաստային մեծ շրջանակներ (մոտենալ, մատուցվել, հաղորդվել, ուղղվել, շփվել, դիպչել, մի բանի կամ մեկի հետ կատարել և այլն):

Հանգման անուղղակի խնդիր կախյալ նախադասությունը տարբերակվում է հետևյալ քերականական հատկանիշներով.

1. Պարզ նախադասության իր համանուն խնդրի նման համապատասխանում է տրական հոլովի իմաստաքերականական պահանջներին: Գերադաս նախադասության մեջ կարող է ունենալ կամ ակնկալել ձևական հանգման խնդիր, որի միջոցով ավելի հստակ է երևում կախյալի բնույթը:

Օրինակ. ա) Հիմա ես հավատում եմ **այն բանին, որ եղբայրության ուժով Հովասարի լանջերում կծաղկեն այգիները** [5, 224]:

բ) Մարդիկ զարմանում էին, **թե ինչպես էր ամբողջ կյանքում տանը նստած քառասունն անց կինն իմանում ապրանքների գները** [6, 133]:

Առաջին օրինակում գերադաս նախադասության մեջ կա հարաբերյալով և կապական բառով արտահայտված ձևական խնդիր՝ *այն բանին* (ինչի՞ն), որն ունի տրական հոլովակարգ: Երկրորդում ձևական խնդիր չկա, բայց տրամաբանորեն ակնկալելի է՝ ըստ հարցադրման (ինչի՞ վրա), որը ևս համապատասխանում է տրական հոլովակարգին:

2. Կարող է ունենալ թե՛ անձի, թե՛ իրի առում՝ համապատասխանաբար պատասխանելով *ու՞մ* և *ինչի՞/ն/* (*ու՞մ* կամ *ինչի՞ վրա / նկատմամբ, հետք, հանդեպ* ևն) հարցերին: Անձի առման դեպքում սովորաբար կապակցող բառը լինում է դերանուն:

Օրինակ. ա) Մտերմանում է բոլորի հետ, **ով համաձայնում է հետը խմել [անձի առում]** [7, 483]:

բ) [Անդրեյը կանգնած էր անշարժ ու] կարծես սպասում էր, **որ իր սիրտն էլ կընկնի հողմերի առաջ [իրի առում]** [8, 71]:

Իրի առման դեպքում կապակցման միջոցներն ավելի հարուստ են, դրանց դերում կարող են լինել թե՛ դերանուններ, թե՛ շաղկապներ:

3. Գերադաս բաղադրիչում խնդրառու բայերի սեռային կարգը ճկուն է: Բոլոր երեք սեռերի բայերն էլ կարող են դառնալ խնդրառուներ: Չեզոք սեռը հատկապես դրսևորվում է առարկայական իմաստով բայերի դեպքում: Ներգործական և կրավորական սեռերի բայերը հիմնականում ունենում են մատուցման իմաստային երանգ (ուղղվ/ել, հաղորդվ/ել, հանձնվ/ել, ասվ/ել ևն):

Օրինակ. [Վաղուց, շատ վաղուց է, որ ես անհավատ եմ դարձել,] **ծիծաղել եմ** [չեզոք] նրանց վրա, *ովքեր աղոթել են ու հավատարացել աստծուն*: /9, 58/: [Ես գիտեմ, թե տվածի ինչքանն է միայն իմը և] ինչքանը պետք է **փոխանցեմ** [ներգործական], *ում որ հարկն է* /10, 369/: Նահանջի մասին **զեկուցվեց** [կրավորական] նրան, *ով ուներ իրենից բարձր սպայական աստիճան* /11, 103/:

4. Հանգման խնդիր կարող են ունենալ գերադասի խնդրառու բայերի գրեթե բոլոր իմաստային խմբերը (բացառությամբ հասկացական-իմացական բայերի):

Օրինակ. [Նա կարծես մոռացել էր քիչ առաջվա խոսքը և] այլևս **չդիմադրեց** [կամային], որ ես ուղեկցեմ [9, 103]: **Մի զարմանա** [զգացական], որ այս անունները հայտնի են ինձ [10, 364]:

5. Խնդրառու բայի դերում կարող են հանդես գալ նաև դերբայներ, հարադրություններ, ստորոգելիական վերադրի դեր կատարող այլ խոսքի մասեր:

Օրինակ. **Հավատա՞լ** [դերբայ] արդյոք, *որ հիմա իրական է այդ պատկերը, որ այն չի ցնդի, չի անհետանա* /11, 62/: **Վա՛յ** [ծայնարկություն] նրան, *ով ընկնում է Թալանի ճանկը* /12, 15/:

6. **Կապակցման եղանակներն ու միջոցները:** Հանգման խնդրային ստորադասական կառույցներում գերակշռում են զոդվածական կապակցման մենադիր տեսակները:

Օրինակ. [Նա կարծես մոռացել էր քիչ առաջվա խոսքը և] այլևս չդիմադրեց, **որ** ես ուղեկցեմ [11, 103]: Իսեղճ կինն ու երեխաները բերանները բաց նայում են, **թե** ոնց է տեր հայրը խժռում լավաշները, մածունը, պանիրը [12, 129]:

Հանդիպում են նաև զուգադիրներ, որոնց կապակցող նշույթներն են *որ, թե* շաղկապները, *ով, որ(ը), ինչ(ը)* հարաբերականները և *կապական բառերը*:

Օրինակ. Սակայն նա կարողանում էր զսպել իր կարոտն ու խուսափել հանդիպելուց **նրան, ում** համար պատրաստ էր տալ մարտերում շահած իր փառքն ու կյանքը [13, 6]:

Ինչպես բոլոր խնդիրների դեպքում, այստեղ էլ երբեմն կարող են հանդիպել *որպեսզի* շաղկապով սխալ կապակցություններ:

Օրինակ. Երեկոյան նա... դեմ չեղավ, **որպեսզի** [փոխ.՝ **որ**] Շուքուֆեն գնա Ազադիի մոտ [14, 209]: Դա չի խանգարում, **որպեսզի** [փոխ.՝ **որ**] ես կանգնեմ զգաստ, զինվորական օրենքի համաձայն պատիվ տամ [9, 17]:

6.1. Հանգման խնդրային բարդ կառույցներում *որ* և *թե* շաղկապներն ունեն կիրառման գրեթե նույն առանձնահատկությունները, ինչ ուղիղ խնդիրներում: Տարբերությունն այն է, որ *եթե* ուղիղ խնդիր կառույցներում այս նշույթները հազվադեպ են ունենում հարաբերյալներ, ապա հանգման խնդրում երբեմն ուղեկցվում են դրանցով (եթե պահանջվում է կախյալը տրամաբանորեն շեշտել):

Օրինակ. Հողը վառվում է, և մենք հավատում ենք *նրան*, որ հրկիզող շիշը իրոք «հզոր գենք է» [9, 73]:

6.2. Հանգման խնդրային բարդ նախադասությունները ևս ունենում են շարահարական կառույցներ, սակայն դրանք իրենց քանակով զգալիորեն զիջում են ուղիղ խնդիր ստորադասական նախադասության շարահարական դրսևորումներին:

Օրինակ. Չէ, հավատա, *ես էսօր կմեռնեմ* [15, 411]: *Ում ուզում եք* հարցրեք... [16, 152]:

6.3. Ինչպես բարդ խնդրային այլ կառույցների, այնպես էլ հանգման խնդրայինի գերադաս բաղադրիչում կարող են հանդիպել խնդրառուներ, որոնք ձևաբանորեն կարող են ընկալվել *թե՛* որպես խնդրառու ածականներ, *թե՛* որպես զեղչված հանգույցով ստորոգյալի լրացումներ:

Օրինակ. Պառկել եմ փափուկ ծովախոտին՝ միանգամայն անտարբեր [հանգույցի զեղչում /*լինելով*], *թե ինչ են անում տղաները* [9, 94]: Իսկ Վահեն ու Զարուհին քայլեցին իրենք էլ անուշադիր [*նույնը*], *թե դեպի ուր*, անուշադիր [*նույնը*], *թե ովքեր կան շուրջները*, *նկատու՞մ են իրենց*, *թե՞ ոչ* [10, 382]:

**7. Շարադասությունը:** Հանգման խնդրային բարդ կառույցներում կախյալ բաղադրիչը հիմնականում վերջադաս է: Հազվադեպ հանդիպում են նաև շրջուն շարադասությամբ կապակցություններ:

Օրինակ. Ո՞վ կհավատա, *թե իր ավագ որդին ցավ է պատճառել հորը*, ո՞վ կհավատա, *որ դաժան ու անողոր Սայմնը հայրական սիրտ ունի [վերջադաս]* [7, 478]: *Որ քեզ ասում էի*, [թե սասունցիք ծուռ են,] չէիր հավատում [*առաջադաս*]: [15, 238]:

**Եզրակացություն:** Դիդակտիկ լեզվաբանության մեջ բարդ ստորադասական նախադասության խնդրային կախյալների տարբերակման գործընթացն առավել արդյունավետ կլինի, եթե առաջնահերթությունը տրվի քերականական ձևին (խնդրի հոլովակարգին, այդ կարգը լրացնող կապական բառերին և այլն): Ըստ այդմ՝ հանգման անուղղակի խնդիր կախյալ նախադասությունը համապատասխանում է տրական հոլովի իմաստաքերականական պահանջներին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., «Միտք», 1965, 700 էջ:
2. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու: Շարահյուսություն, Ե., Եր. համալս. հրատ., 1987, 368 էջ:
3. Իշխանյան Ռ., Արդի հայերենի շարահյուսություն: Պարզ նախադասություն, Ե., Եր. համալս. հրատ., 1986, 340 էջ:
4. Ջահուկյան Գ.Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 586 էջ:
5. Այվազյան Ս., Լեռնցիներ, Ե., Հայպետհրատ, 1955, 455 էջ:
6. Խեչումյան Վ., Գիրք պանդխտության, Ե., Հայպետհրատ, 1959, 288 էջ:
7. Ալաջաջյան Ստ., Պարտություն // Երկեր, գ. 1-ին, Ե., Սովետական գրող, 1976, էջ 297-612:
8. Արամյան Վ., Մարդու սերը, Ե., Հայպետհրատ, 1962, 180 էջ:
9. Հովսեփյան Բ., Սերմնացանները չվերադարձան, Ե., 1962, Հայպետհրատ, 291 էջ:
10. Սահինյան Ա., Ծարավ // Ընտիր երկեր: Հ. 3, Ե., «Սովետական գրող», 1988, 576 էջ:
11. Պետրոսյան Վ., Անավարտ դիմանկարներ, Ե., Հայպետհրատ, 1963, 308 էջ:
12. Խանզադյան Ս., Ավանդատուն, Ե., Սովետական գրող, 1986, 288 էջ:
13. Խանզադյան Ս., Մխիթար սպարապետ, Ե., Հայպետհրատ, 1961, 844 էջ:
14. Սևունց Գ., Թեհրան, գ. 2 // Երկեր 5 հատորով: Հ. 2, Ե., 1963, 599 էջ:
15. Դաշտենց Խ., Խողեղան, Ե., Հայպետհրատ, 1956, 511 էջ:
16. Անանյան Վ., Սևանի ափին, Ե., Հայպետհրատ, 1953, 526 էջ:

## Л.У. АЙРАПЕТЯН

### КОСВЕННОЕ ДОПОЛНЕНИЕ КАК ЗАВИСИМОЕ ПРЕДЛОЖЕНИЕ В СЛОЖНОЙ КОНСТРУКЦИИ

В армянском синтаксисе существуют разные подходы к определению характера второстепенного предложения в изъяснительных придаточных конструкциях, разнообразие которых затрудняет уточнение научной классификации. На примере косвенного дополнения предлагается отдать приоритет требующемуся падежу дополнения.

**Ключевые слова:** сложноподчиненное предложение, изъяснительное подчинение, косвенное дополнение, дательный падеж.

## L.U. HAYRAPETYAN

### THE INDIRECT OBJECT AS A DEPENDENT CLAUSE IN A COMPLEX STRUCTURE

There are multiple approaches in Armenian syntax to determining the nature of the subordinate clause in objective subordinate structures, the diversity of which impedes further developments on scientific classification. Taking the indirect object as a basis, it is proposed to prioritize the grammatical case required by the object.

**Keywords:** complex sentence, object clause, prepositional indirect object.